

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:



Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ



ԼԲ տարի (32-ամեակ)
2025-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Բովանդակություն

Խօսք՝ Հովհիի եւ Հոգաբարձութեան	էջ 3
Մեր խօսքը	4
Շնորհակալական նամակ ՀՕՄ-էն	5
https://www.sourphagop.org	6-7
https://www.facebook.com/sourphagop.org	
https://www.instagram.com/sh_sundayschool/	
Հակիրճ տեղեկութիւններ 2024-25 տարեշրջանի մասին	8
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝	10
Աշակերտական ներկայութեան տախտակներ	11-12
Ամփոփում 2024-25 (45-րդ) տարեշրջանի Գործունէութեան	12
2024-25 տարեշրջանի կամաւոր կազմը	40

ՎԵՐԱՄՈՒՏ՝
14 Սեպտ. 2025
 Ժամը 10:30



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

7 Մայիս 2025, Մոնթրեալ

036/24-25

Սիրելի տնօրենություն,
դաստիարակչական կազմ եւ ծնողներ
Ս.Յակոբ Կիրակնորեայ դպրոցի,
Աստ,

Երախտագիտության եւ գնահատանքի այս նամակը կը գրենք, երբ մատուցուած է Աշխարհամատորան կամ Կանաչ Կիրակիի Ս. Պատարագը, եւ պիտի մատուցուի Կարմիր Կիրակիի Ս. Պատարագը:

Նշանակալից այս ժամանակին դիտանկիւնէն՝ մեր Կիրակնորեայ դպրոցը կը տեսնենք որպէս մատուցող մը, ուր Բրիտանական հաստիքը կը դրոշմուի մեր մանուկներու եւ պատանիներու սրտերուն մէջ: Ս. Յակոբ Կիրակնորեայ դպրոցը՝ համայնքային մեր աշխարհին մէջ վառ ճրագներով մատուցող մըն է, հեզ եւ խոնարհ: Նոր սերունդներուն հոգեւոր լուսաւորմամբ է, որ համայնքային մեր կեանքը պիտի պայծառանայ:

Այս Կիրակնորեան սկիզբէն իր տարեշրջանները սկսած է Խաչվերացի տօներուն: Խաչվերացի տօները՝ նուիրուած են Տէրունական Խաչին փառաբանության, քայց միաժամանակ՝ կը սորվեցնեն, թէ առանց զոհողութիւններու՝ փրկութիւն չ'ըլլար: Կարմիր Կիրակին ալ նոյնը կը սորվեցնէ: Կրթարան պահելը՝ լուսարար զոհողութիւն է. դաստիարակելը՝ լուսարար զոհողութիւն է. դաստիարակուիլը՝ լուսարար զոհողութիւն է:

Ս. Յակոբ Կիրակնորեայ դպրոցին ճրագներուն յոյսը՝ մեր համայնքային կեանքին մէջ կը ճառագայթէ, եւ մեզ կ'ուրախացնէ:

Բարեմաղթութեամբ՝

Հովիւ եւ հոգաբարձութիւն

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 32 Կիրակիներ:

Այս տարի նաեւ 32-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2024-ին մեր կայքէջին www.sourphagop.org-ին 24-րդ տարեդարձն էր:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը մնայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, ընդհանրապէս կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ Հայ Քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 95 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 119-էն 99-ի պակսեցաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 70-էն 61-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտներու աճ արձանագրեցինք, սակայն երկրորդականի աշակերտներուն թիւը նուազեցաւ:

Աստուծոյ կամքով՝ մեր 46-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Մեպտեմբեր 14, 2025-ին է: Յոյսով ենք որ մեծագոյն թիւով աշակերտներ՝ մանկապարտեզի, նախակրթարանի, եւ երկրորդականի մէջ պիտի միանան մեր Կիրակնօրեայ Դպրոցին:

Փառք՝ Աստուծոյ, Պայծառութիւն Հայ եկեղեցւոյ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.

«Ժողովուրդիս Հետ, Ժողովուրդիս Համար» - 115 Տարի Անխնդ Նուիրում
 "With the People, For the People" - 115 Years of Unwavering Service



2023-2025. 268
 Մայիս 12, 2025

ՄԱՍՆԱՃԻՂԵՐ
CHAPTERS · CHAPITRES

Գեմարիճ Մելրի
 Cambridge Meghri

Համիլթոն Արև
 Hamilton Arev

Լավալ Շուշի
 Laval Shoushi

Միսիսսոկա Արագաստ
 Mississauga Arakast

Մոնթրեալ Սոսե
 Montreal Sosse

Օթթաուա Սեան
 Ottawa Sevan

Սենթ Գաթրինա Արազ
 St-Catharines Araz

Թորոնթո Ռոբինա
 Toronto Roubina

Վանգուվեր Արազ
 Vancouver Araz

Ուինսոր Ռոբինա
 Windsor Roubina

Պատուարժան տնօրենություն՝
 Ս. Յակոբ Կիրակնօրեայ Վարժարանի,

Սիրելի ուսուցիչներ եւ աշակերտներ,

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչությունը կու գայ իր սրտագին շնորհակալությունը եւ անհուն երախտագիտությունը յայտնելու ձեզի, վարչութեանս «Որբախնամ Ծրագրին» մէկ որբի հովանաստրութեան արթիւ:

Ուրախ ենք, որ այս արարքով բարեսրտութիւն կը սերմանէք մեր մասնաշաղկի սերունդին մէջ:

Բոլորիդ քաջատոյժութիւն եւ փայլուն ապագայ կը մաղթենք:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Հնկերական քերթ բարեկեցութիւն՝



CANADA
 Լուսին Փալանճեան
 Ատենապետ
 Հայ Օգնութեան Միութեան
 Գանատայի Շրջանային Վարչութիւն

3401, Olivar-Asselin, Montréal (Québec) H4J 1L5 • Tél.: (514) 333-1616 • Télécopieur/Fax : (514) 333-1612

E-mail: ars-canada@bellnet.ca www.ars-canada.ca

https://www.sourphagop.org/

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 25-րդ տարին մտաւ 2024-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ձոխացուցինք անոր բովանդակութիւնը: Այս տարի հիմնովին փոխեցինք մեր կայքէջը եւ անոր տուինք նոր տեսք:



Մեր Գործածած Դասագիրքեր


Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի դասնասցները և՛ ինտենսիվ «Կիրակնօրեայ Դպրոցներու Տարեկան Ուղեցրդ-Ծրագիր»-ին (աջին) Դասարկարկները և՛ զործածեն «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր» դասագրքերու շարքը. ինչպէս նաեւ Gospel Light կազմակերպութեան կողմէ արարաւարտած եւ World Vision-ի կողմէ հրատարակուած դասագիրքերու հաջորդած տարբերակը ուր ներմուծուած են Պալ Լազարեանի եկեղեցւոյ սուրբերու վարդն ու կարգ մը եղանակոր տօներն ու աստղաշիւղները: Այս փոքիկները նաեւ ունեն խորհրդանշական գիւղի համար «Մաշտոցի Ուղեցրդ»:

Մանկապարտէզ Լատինագրութեամբ Եփեսոսական



Տարեկան Ուղեցրդ-Ծրագիր Կիրակնօրեայ Դպրոցներու

Մանկապարտէզ



Մաշտոցի Արձագանգ

Մեր ամսաթերթը



Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամստօնական պարբերաբերը և՛ նույնի «Մաշտոցի Արձագանգ»: Ան ասացն անցաւ յոս տասն Դեկտեմբեր 20, 1992-ին եւ գրեթէ երկամսեայ դրութեան 13 թիւով յոս տեսան միջին Դեկտեմբեր 11, 1994: 1995-էն մինչեւ 2002 «Մաշտոցի Արձագանգ»ը կանոնաւորապէս հրատարակուեցաւ տարեկան թիւով, մէ ուր և՛ գրագրութիւնը դպրոցական տարեշրջանի աստիճան: 2002-2003 տարեշրջանի սկիզբը, որովհետեւ պարբերաբերը վերանշխ ամսաթերթի:

2024-2025 տարեշրջան

Մասնակցութիւն	Յոկտեմբեր	Նոյեմբեր
Դեկտեմբեր	Յունուար	Փետրուար
Մարտ	Մայիս	Յուլիս
Յուլիս	Քաղաքիկ	

<https://www.facebook.com/sourphagop.org>

Այս տարի կանոնադրաբար թարմացուցինք մեր FACEBOOK-ի եւ Instagram-ի էջերը:



https://www.instagram.com/sh_sundayschool/



ՀԱԿԻՐՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2024-25 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

45-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2024-25 տարեշրջանը 45-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 45-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Այս տարեշրջան սկսաւ Կիրակի 15 Սեպտեմբեր 2024-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 18, 2025: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ Մանկապարտեզի, Նախակրթարանի 5, Երկրորդականի 2 դասարաններ:

32-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2024-25 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 32-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ:

24-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկուան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչներն ու երկրորդականի աշակերտներ Յունուար 5-ին եւ Ապրիլ 19-ին եկեղեցւոյ մէջ կատարեցին մարգարեական ընթերցումները:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2024-25 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 99 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 60՝ բաժնուած 8 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2024-25 տարեշրջանին ունեցանք 8 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ եւ Կոկոն

Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.

Նախակրթարան Բ. եւ Գ.

Նախակրթարան Դ .

Նախակրթարան Ե.

Նախակրթարան Զ.

Երկրորդական Ա. Բ. եւ Գ.

Երկրորդական Դ.

Երկրորդականի Պատասխանատու

Երգերու եւ շարականներու ուսուցում

«Մաշտոցի Արձագանգ»

Կայքէջի պատասխանատու

FACEBOOK-ի եւ INSTAGRAM

Տնօրէն

Օգնականներ՝ Սեւակ Ստեփանեան (Իսթիպաք), Յարութ Չուլճեան, Գրիգոր Պէքերեան, Մհեր Ստեփանեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2024-25 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցումաձքին համաձայն լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմութիւններու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:


ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

8 Սեպտեմբեր 2024	Նոր աշակերտներու արձանագրություն
15 Սեպտեմբեր	Տարեսկիզբ եւ վերամուտ
29 Սեպտեմբեր	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդություն ստացաւ
13 Հոկտեմբեր	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
22 Դեկտեմբեր	Ս. Ծննդեան Տօնակատարություն:
5 Յունուար 2025	Ս. Ծննդեան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն
2 Մարտ	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարություն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
5 Ապրիլ	Երկրորդականի ուսուցիչներ Գրիգոր Պէքերեան եւ Յարութ Զուլճեան Եկեղեցւոյ մէջ ներկայացուցին Զարեհ Արք. Ազնաւորեանի «Հասկնանք մեր Պատարագը» Գիրքը:
12 Ապրիլ	Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմը իր մասնակցութիւնը բերաւ Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Հոգատար Յանձնախումբին, կազմակերպած «Փոքրերու Ծաղկարգարդի Հաւաքոյթ»ին: Դաստիարակչական բնոյթով սոյն ձեռնարկին մասնակցեցան աւելի քան 250 փոքրիկներ:
13 Ապրիլ	Ծաղկազարդ Կիրակնօրեան փակ էր,
19 Ապրիլ	Ս. Զատիկուան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ Մատուցմամբ մեր աշակերտներուն
20 Ապրիլ	Ս. Զատիկ Կիրակնօրեան փակ էր:
11 Մայիս	Մայրերու տօն, Հանդէսի փորձ:
18 Մայիս	Ամաւերջի հանդէս եւ Տարեփակ


Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2024-25 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2024-25 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ Արձանագրուած / Ներկայ



ԱՄՓՈՓՈՒՄ 2024-25 (45-րդ) ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ



Նախակրթարանի Տեսերիզի Խմբակ



Բողոքոջ եւ Կոկոն



Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.



Նախակրթարան Բ. և Գ.



Նախակրթարան Դ.



Նախակրթարան Ե.



Նախակրթարան Զ.



Երկրորդական Ա. Բ. և Գ.



Երկրորդական Դ.

Սեպտեմբեր

8 տեղի ունեցաւ **Նոր աշակերտներու արձանագրութիւնը**:

15 Սեպտեմբեր 2024-ին **արձանագրութիւնները շարունակուեցան** եւ տեղի ունեցաւ մեր 2024-25 Տարեշրջանի (45-րդ) **Վերամուտը**: Աշակերտները նախ սերտեցին այս տաղաւար տօնը, իսկ ետքը զանազան ձեռնարկներով նշելու համար **Խաչվերացը**, խաչեր պատրաստեցին: Նախքան որ մեկնին, իւրաքանչիւր աշակերտ ստացաւ ռեհանի բոյս, ըստ հայկական աւանդութեան: Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00 հետեւեալ ձեւով:

10:30-11:00

Յաւաք

11:00 -11:10

«Հայր մեր», Աղօթք, Օրուան խորհուրդը, Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերը

11:10 - 11:45

Ա. դասապահ

11:45- 12:20

Բ. դասապահ

12:20-12:55

Գ. դասապահ

12:55-13:05 Աղօթք, «Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան...», Արձակում:



Սեպտեմբեր 22 Կիրակնօրեայ Դպրոցը արձանագրեց նոր աշակերտներ եւ շարունակեց իր գործունեութիւնը ժամը 10:30-13:00: Աշակերտները, ըստ իրենց դասարանային բաժանումներուն, ունեցան 3 դասապահեր: Երգեցողութեան պահուն վերաքաղ մը ըրին իրենց գիտցած երգերուն: Լսարանային դասապահի ընթացքին անդրադարձան «Մաշտոցի Արձագանգ»ի Սեպտեմբեր 2024 թիւին մէջ տեղ գտած նիւթերուն (**Բարեկենդան Վարագայ Սուրբ Խաչի**) եւ Դասարանային պահուն, իրաքանչիւր դասարան ըստ իր ծրագրին, ունեցաւ իր դասաւանդութիւնը : Տարբեր դասարաններու նիւթերն էին Ս. Կոյս Մարիամ, Ստեղծագործութիւն, Վերջին Ընթրիքը (պատրաստուելու համար յաջորդ Կիրակի եկեղեցւոյ մէջ Սուրբ Հաղորդութիւն ստանալու), Վարագայ Սուրբ Խաչ, Աստուածաշունչի ներածական:



Սեպտեմբեր 29 Կիրակնօրեայ Դպրոցը եկեղեցի ուղղուեցաւ, ուր աշակերտները, ուսուցիչներն ու տնօրէնը **Ս. Հաղորդութիւն** ստացան: Վերադառնալով դպրոց, աշակերտները իրենց դասարաններուն մէջ անդրադարձան Ս. Հաղորդութեան խորհուրդին, ինչպէս նաեւ **Սուրբ Գեորգ**ին եւ **Վարազայ Ս. Խաչ**ին: Արձանագրութիւնները շարունակուեցան եւս երկու Կիրակի:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 6 Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, լսարանային պահուն, աշակերտները անդրադարձան Յիսուսի **72 աշակերտներ** ունեւ ինչպէս որպէս Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներ ինչպէս պէտք է աշակերտել Յիսուսի: Դասարանային պահը շարունակեցին ըստ դասագրքերու: Աշակերտները նաեւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Հոկտեմբեր 2024-ի թիւը:

13 նշելու համար **Թարգմանչաց սուրբերուն տօնը**, դասարանները կատարեցին զանազան ձեռնարկներ աշխատանքներ եւ երգեցողութեան պահուն երգեցին «Այբ, Բեն, Գիմ... եւ սորվեցան «Որք զարդարեցին...» շարականը: Այս առիթով, մեր գրադարանի գիրքերու ցուցահանդէս մը կազմակերպեցինք, եւ **Իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը ստացաւ որպէս նուէր**: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները սորվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը.

«Առանց **մեսրոպեան ոճով մարդակերտումի**, խախուտ են բոլոր կերտումները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիմն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:


«Հայ Գիրքը միւտո՛ւն է մեր ժողովուրդի զաւակներուն համար: **Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւտոնուի հայութեամբ»:**

20 Աշակերտները տօնեցին **4 Ս. Աւետարանիչներուն (Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս)** տօնը՝ եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ:

27 Աշակերտները տօնեցին **Ս. Խաչի գտնուելուն տօնը** եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ: Դասարանային պահուն իւրաքանչիւր դասարան շարունակեց իր ծրագիրը:







ՆՈՅԵՄԲԵՐ

Լսարանային պահերուն՝

3 աշակերտները անդրադարձան **Ամենայն Սրբոց** տոնին եւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Նոյեմբեր 2024 թիւը:

10 Ս. Գաբրիել եւ Ս. Միքայել Յրեշտակապետերու տոնին:

17 Յիսուսի առաքելներէն **Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի** ինչպէս նաեւ **Յիսնակի Պահքի Բարեկենդանին**:

24 Ս. Գրիգոր Սքաչելագործին եւ Ս. Նիկողայոսին (որ նախատիպարն է Santa Claus-ին): Դասարանային պահերուն շարունակեցին ըստ դասագրքերու, եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր սորվեցան:





ԴԵԿՏԵՄԲԵՐ

1 լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Թադեոս** եւ **Սբ. Բարթուղիմեոս** մեր առաջին լուսատրիչներուն: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, եւ մանկապարտեզի, նախակրթարանի եւ երկրորդականի դասարանները ունեցան երաժշտութեան պահ Սբ. Ծննդեան երգեր սորվելով: Աշակերտները նաեւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»ի Դեկտեմբեր 2024-ի թիւը:

8 լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Յակոբի Բարեկենդան**ին, ունեցան երաժշտութեան պահ եւ պատրաստուեցան Սբ. Ծնունդի յայտագրին:

15 լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Յակոբին**, եւ պատրաստուեցան Սբ. Ծնունդի յայտագրին:

22 Սուրբ Ծննդեան Յայտագիր:



Շնորհակալութիւն՝

ՀՕՄ-ի Մոնթրէալի «ՍՕՍԷ» Մասնաճիւղին, որ այս տարի եւս շնորհաւորեց մեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մեր աշակերտներուն որպէս կադանդչէք նուիրեց 500 տոլար:





ՅՈՒՆՈՒԱՐ

5 Ս. Ծննդեան Ճրագալոյցի ընթերցուածները կարդացին Ս. Յակոբ Կիրակնօրեայի աշակերտ-աշակերտուհիները:

12 լսարանային պահուն, աշակերտները անդրադարձան **Յիսուսի Ս. Ծնունդին, Յայտնութեան եւ անուանակոչութեան**, ինչպէս նաեւ **Յովհաննէս Մկրտիչին**: Դասարանային պահը շարունակեցին ըստ դասագրքերու, եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր երգեցին:

19 Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը:

26 Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, լսարանային, դասարանային եւ երգեցողութեան պահերով:





ՓԵՏՐՈՒԱՐ

2 Սովորական գործունեությունը, ժամը 10:30-13:00, լսարանային, դասարանային եւ երգեցողության պահերով: **Բարենիշի Նոր դրուքիւն** ի գործ դրուեցաւ Նախ. Ե - Երկր. Ե. դասարաններուն համար:

9 Լսարանային պահուան ընթացքին անդրադարձան **Առաջաւորաց Պահք** ին եւ **Տեառնընդառաջ** ին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերուն:

16 **Ձիւնամրրիկ** ի պատճառաւ սահմանափակ թիւով ներկայ աշակերտներն ու ուսուցիչները պատրաստուեցան Բուն Բարեկենդանին:

23 Լսարանային պահուան ընթացքին անդրադարձան **Ս. Սարգիս** ին եւ **Ս. Սահակ Պարթեւ** ին: Երգեցողության եւ դասարանային պահեր ունեցան, եւ **Փախուստի Սենեակ (Escape Room)** խաղցան: Աշակերտներուն **Սուրբ Սարգիսի Հալլայ** բաժնուեցաւ:





Մարտ

2 Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները **Վարդանանց**ի մասին գիտելիքներ սորվեցան եւ **ԲուՆ Բարեկենդան**ը տօնեցին: Աշակերտները եւ ուսուցչական կազմի կարգ մը անդամներ ծպտուեցան: Վերջաւորութեան վերյիշեցնելու թէ յաջորդ օրը **Մեծ Պահք** կը սկսի բոլորը հիւրասիրուեցան **Pizza**-ով:

9 աշակերտները անդրադարձան **Արտաքսման Կիրակի**ին, ինչպէս նաեւ **Ս. Թեոդորոս Զօրավար**ին: Դասարանային պահերը շարունակուեցան ըստ ծրագրին:

16 աշակերտները անդրադարձան **Անառակի Կիրակի**ին, երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին:

23 աշակերտները անդրադարձան **Տնտեսի Կիրակի**ին, **Միջինք**ին, ինչպէս նաեւ **Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթեւացի** երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին:

30 աշակերտները անդրադարձան **Դատաւորի Կիրակի**ին, եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին:





ԱՊՐԻԼ 5 Մեր երկրորդականի ուսուցիչներ **Գրիգոր Պեքերեան** եւ **Յարութ Զուլճեան** եկեղեցւոյ մէջ ներկայացուցին Ջարեհ Արք. Ազնաւորեանի «**Հասկնանք մեր Պատարագը**» Գիրքը:

6 Լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Գալստեան Կիրակի**ին ինչպէս նաեւ **Ս. Աստուածածնի Աւետման** տօնին: Երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին:

12 Ուսուցչական կազմը իր մասնակցութիւնը բերաւ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Հոգատար Յանձնախումբին, կազմակերպած «**Փոքրերու Ծաղկարգարդի Հաւաքոյթ**»ին: Դաստիարակչական բնոյթով սոյն ձեռնարկին մասնակցեցան աւելի քան 250 փոքրիկներ:

13 Ծաղկազարդին, մեր երկրորդական Դ.-ի աշակերտներ **Զաւէն Զուլճեան** եւ **Նշան Պեքերեան** իրենց ծառայութիւնը բերին Սուրբ Խորանին:

19 Ճրագալոյցին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներ/աշակերտուհիները **Աստուածաշնչական ընթերցումներ**ը կատարեցին:

27 Լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Նոր Կիրակի**ին (**Կրկնազատիկ**) ինչպէս նաեւ տնօրէնը, ուսուցչական կազմն ու աշակերտները ոգեկոչեցին **Հայոց Տեղասպանութեան 110**-րդ ամեակը Խոստանալով՝

- . Ապրիլ **հայադրոշմ** կեանք մը
- . Վառ պահել հայաստանեայց եկեղեցւոյ **տօներն** ու **ազգային աւանդութիւնները**,
- . Լսել, մտիկ ընել ու երգել մեր **Հայանուագ շարականներն ու երգերը**,
- . Ամուր կառչած ժաւ մեր **հայավայել** բարի բարքերուն ու սովորութիւններուն
- . Կարդալ ու կեանքի վերածել մեր **հայագրեալ Աստուածաշունչը**
- . եւ մանաւանդ **ՍԻՐԵԼ Հայը** ամբողջ տարուան ընթացքին:

Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Նախակրթարանի աշակերտները նաեւ ունեցան երաժշտութեան պահ:









Մայիս

4 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Կանաչ Կիրակիին, Երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Ուսուցիչները Մայիս 18ի ամսվերջի հանդեսին յայտագիրը վերջնականացուցին:

11 լսարանային բաժնին աշակերտները անդրադարձան Մայրերու Օրուն եւ Կարմիր Կիրակիին: Դասարանային եւ երաժշտության պահերուն հանդեսի պատրաստության փորձերը շարունակուեցան:

18 Ամսվերջի հանդեսի փորձ եւ Հանդես...:





Պատրաստուած՝ Երկրորդական Ա. Բ. եւ Գ.
դասարաններուն կողմէ

ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ **ԼԲ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ»ի

այս թիւը կը գտնուին նաեւ համացանցին վրայ

<https://www.sourphagop.org/Documents/Mashdots/Special%20Issues/vol32.pdf>

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2024-25 տարեշրջանի կամաւոր կազմը

Սեւակ Ստեփանեան (Իսթիպար)

Յարութ Չուլճեան

Գրիգոր Պէքերեան

Մհեր Ստեփանեան

Վանի Թոքարլեան

Սարին Խշիշեան

Աննա Մարիա Շամոյեան

Ռիմա Խարշաֆճեան

Հրակ Պանքեան

Ալեքս Տեմիրճեան

Սդեֆան Տեմիրճեան

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Առէն Պապիկեան

Թամար Գիգիրեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թորոս Պապիկեան